



Հավելված

Սևան համայնքի՝ 2017-2021թթ. 5-ամյա զարգացման ծրագրի

Բաղադրիչ - Աղետների ռիսկերի կառավարում և նվազեցում

- Իրավիճակի նկարագրություն

Սևան համայնքի ռելիեֆը հիմնականում հարթ է, կտրտված հեղեղատներով: Միջին բացարձակ բարձրություններն են 1900-1950մ: Արձանագրվում է գրունտային ջրերի բարձր մակարդակ, թույլ անկայուն կարբոնատային ավազների առկայություն, մակերեսային հոսքեր: Տարածված են լճային կարբոնատային ավազներ, կավեր, ավազակավեր, խճեր: Մեյսմիկ վտանգի մակարդակը գնահատվում է 0.3g-ով:

Սևան քաղաքը հիմնականում կոյուղացված է: Կոյուղու համակարգում կառուցված 3 պոմպակայանների միջոցով և ինքնահոս եղանակով կոյուղաջրերը հեռացվում են Հրազդան փողոց՝ Սևան-Գեղամավան կոյուղու կոլեկտոր, որն ուղղվում է Գեղամավանում նախագծվող կենցաղային կոյուղաջրերի մաքրման կայան:

Կոյուղու համակարգը բացակայում է Ցամաքաբերդ թաղամասում, Գոմաձոր թաղամասի մի մասում, Գագարինում: Այն հատվածներում, որտեղ բացակայում է այս համակարգը, կոյուղացումն իրականացվում է բակային ներծծման հորերով, որը լուրջ վտանգ է պարունակում շրջապատի սանիտարական վիճակի համար:

Սևան քաղաքի համար սանիտարահիգիենիկ պատշաճ մակարդակ ապահովելու նախապայմաններից է հեղեղատար կոյուղու առկայությունը, որը համայնքի տարածքից հեռացնելու է անձրևաջրերը և հալոցքից առաջացած ջրերը:

Ներկայումս Սևան քաղաքում հեղեղատար կոյուղի գործում է երկու հատվածում՝ Նաիրյան և Նալբանդյան փողոցներ՝ իրենց հարակից տարածքներով, որտեղից հավաքված ջրերը ուղղվում են Հրազդան գետ: 2-րդ հատվածը ընդգրկում է քաղաքի միկրոթաղամասերի մի մասը, որտեղից հավաքված ջրերը լցվում են հողի մակերևույթ:

Հեղեղատար ջրերը սելաֆատար լցվելուց առաջ պետք է անցնեն մեխանիկական մաքրում:

